# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

2018-ի ապրիլի 26-ին տեղի ունեցավ 1<<|Ա>> դասարանի ծնողական ժողովը 34 ծնողի մասնակցությամբ: Ծնողական ժողովին մասնակցում էին դասվար Տ. Բագրատյանը և տնօրենի կրթական աջակցությունների գծով տեղակալ Զոյա Գևորգյանը:

**Օրակարգում`**

1.<<Հրաժեշտ Այբբենարանին>> միջոցառման վերաբերյալ կազմակերպչական հարցերի քննարկում:

2.Ընթացիկ հարցեր:

**Լսեցին**

1.<<Հրաժեշտ Այբբենարանին>> միջոցառման վերաբերյալ կազմակերպչական հարցերի քննարկում:

Ելույթ ունեցավ դասղեկ Տ. Բագրատյանը, որն էլ ներկայացրեց <<Հրաժեշտ Այբբենարանին>> միջոցառման անհրաժեշտությունը և դրան վերաբերվող հարցերը: Դասվարը մանրամասնորեն նշեց ,որ տառաճանաչությանը և գրաճանաչությանը նվիրված այս միջոցառմանը յուրաքանչյուր աշակերտ պետք է ներկայանա ձեռք բերած գիտելիքների մակարդակը ի ցույց դնելու և պատշաճ ներկայանելու տրամադրվածությամբ:

**Որոշեցին**

Օրվան համապատասխան ծնողկոմիտեի նախագահի և մյուս ծնողների օգնությամբ ձևավորել դահլիճը: Ձեռք բերել միջոցառմանը համապատասխան բեմական հագուստներ, որոնց հիմնական մասը դպրոցն ունի, մյուս մասն էլ կարելի է ձեռք բերել շնորհալի ծնողների ուժերով:

**Լսեցին**

2.Ընթացիկ հարցեր:

Ժողովի ընթացքում քննարկվեցին մի շարք այլ հարցեր, որոնք վերաբերվում էին աշակերտների առաջադիմությանը, վարքին, համազգեստին, սանիտարական վիճակին: Հատուկ ուշադրություն դարձվեց գրքերի պահպանմանը: Դասվարը նշեց, որ բոլոր աշակերտները տառաճանաչ և թվաճանաչ են: Նշվեց,որ աշակերտները դպրոց են հաճախում աշակերտավայել և նրանց կարգապահությունը բավարար մակարդակի վրա է գտնվում:

**Որոշեցին**

Որոշեցին բոլոր հարցերում համագործակցել դասղեկի հետ և օգնել նրան:

Ծնողական խորհրդի նախագահ / [signature] / Գուլամերյան Արմինե
Քարտուղար / [signature] / Աբրահամյան Հերմինե